

ԾՐԱԳԻՐ

«ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՄԱԲՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	<p>Նախատեսում է ՀՀ Լոռու մարզի, Փամբակ համայնքի, Դերետ, Վահագնի և Եղեգնուտ բնակավայրերում ներդնել աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել համաձայնություն Փամբակ համայնքի հետ և արդյունքում հիմնվելու է համայնքային ոչ առևտրային կազմակերպություն, որը կիրականացնի նշված երեք բնակավայրերի աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունները: Այդ նպատակով հիմնադրամը ձեռք է բերելու աղբատար մեկ մեքենա և աղբամաններ ու նվիրաբերելու է հիմնվող ՀՈԱԿ-ին:</p> <p>«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը իր աշխատակիցների մասնակցությամբ իրականացնելու է համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ, այդ թվում հաղորդակցության ժամանակակից հավելվածների կիրառումը բիզնեսում, տվյալների բազաների ստեղծումը google suite համակարգում և ֆինանսների կառավարմանն ուղղված տեղեկատվություն և (կամ) դասընթացներ:</p>
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Զիլդրեն ՕՖ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը:

4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համանք, Դեբետ, Վահագնի և Եղեգնուտ բնակավայրեր, բնագավառը՝ համայնքային զարգացում:
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 37,000,000 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	«Դեբետ - Վահանգնի - Եղեգնուտ բնակավայրերի աղքատացում և սանիտարական մաքրման ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունվարի 24-ից մինչև 2022 թվականի հունիսի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	<ul style="list-style-type: none"> • «Գալուպեր» ՍՊԸ-ից աղքատար մեքենայի ձեռքբերում 22,000,000 (քսաներկու միլիոն) դրամ, առանց ԱԱՀ արժողությամբ, 2022 թվականի հունվարի 24-ից մինչև 2022 թվականի հունիսի 1-ը: • «Պրոֆմետալլ» ՍՊԸ-ից (ՌԴ) մետաղական աղբամանների ձեռքբերում ընդհանուր 10,000,000 (տասը միլիոն) դրամ, առանց ԱԱՀ արժողությամբ, 2022 թվականի հունվարի 24-ից մինչև 2022 թվականի հունիսի 1-ը: • Համակարգիչների ձեռքբերում ընդհանուր 5,000,000 (հինգ միլիոն) դրամ, առանց ԱԱՀ արժողությամբ, 2022 թվականի հունվարի 24-ից մինչև 2022 թվականի հունիսի 1-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը,	Ծրագրի շրջանակներում ներմուծվելու է 22,000,000 դրամի շրջանակներում աղբատար մեքենա և 10,000,000 դրամի շրջանակներում մետաղական աղբամանների ներմուծում: Ծրագրի շրջանակներում ՀՀ տարածքում կնքվելու են համակարգիչների ձեռքբերման պայմանագրեր՝ 5,000,000 դրամի շրջանակներում:

	ծավալները և նախատեսվող գինը	
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Փամբակի համայնքապետարանի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ